

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի
հարցաշարեր
(2023-2024 ուստարի)
XII դասարան
(Տևողությունը՝ 180 րոպե)

«Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի
բովանդակությունը»: Հովհաննես Թումանյան

1. Ո՞վ է հայ գրականության «նահանջի փողհարը»: Ի՞նչ գիտես նրա
ստեղծագործության և գրական կեղծանվան մասին: Ի՞նչ նահանջի մասին
է խոսում գրողը: Գրի՛ր մի քանի նախադասություն, որտեղ խոսվում է
բացահայտ նահանջի և այդ նահանջի սարսափի մասին:

5 միավոր

2. Ո՞վ է Կոստան Ջարյանը: Ե՞րբ սկսեց գրել հայերեն. ի՞նչն ստիպեց
նրան վերադառնալ ակունքներին: Գրի՛ր այդ գրույցի պատմությունը:
Վերլուծի՛ր «Տագրագումի հարսը» պոեմը:

5 միավոր

3. Ի՞նչ գիտես Մուշեղ Գալշոյանի մասին: Ի՞նչ գեղարվեստական ֆիլմ է
նկարահանվել նրա սցենարով: Հավատո՞ւմ ես Գալշոյանի հավատի.
ինչպե՞ս կմեկնաբանես Գալշոյանի հետևյալ միտքը. «Հարո՛ւթ, աշխարհք
ամենամեծ կորուստ մարդու կորուստն է: Մարդու կորուստ անդարձ
կորուստ է: Էրգիր ու հողի կորուստ ծանր կորուստ է, բայց հող անմահ է,
հող ուրիշ տեր չի ընդունե, հող իր տիրոջ հետ արնակից է ու իր
արնակցին կսպասե՛, կսպասե՛, ու օրերից մի օր կհանդիպին»:

5 միավոր

4. «Իմ Սևակը»: Նվիրվում է Պարույր Սևակի ծննդյան հարյուրամյակին:

5 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան